

Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարար

Վ. Գարրիբյան

Հայաստանի Հանրապետության
կրոնավարության և աղոթքեր պետական
եկամուտների կրթության նախագահ
Գ. Խաչատրյան



2011թ.

N

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Չ Ա Բ Ա Ն ՈՒ Մ
Ե Կ Ա Մ Տ Ի Վ Ճ Ա Ր Մ Ա Ն Ա Ր Ք ՈՒ Ր Ի Մ Ո Տ Հ Ա Ր Կ Ա Յ Ի Ն Գ ՈՐ Ծ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ի Կ Ո Ղ Մ Ի Ց
Շ Ա Հ ՈՒ Թ Ա Հ Ա Ր Կ Ի (Ե Կ Ա Մ Տ Ա Հ Ա Ր Կ Ի) Հ Ա Շ Վ Ա Ր Կ Մ Ա Ն Մ Ի Ք Ա Ն Ի Հ Ա Ր Ց Ե Ր Ի
Վ Ե Ր Ա Բ Ե Ր Յ Ա Ն

<<Շահութահարկի մասին>> ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի և 64-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ: Բացառությամբ ապահովագրական հատուցումների, վերապահովագրական վճարների և փոխադրման (ֆրախտի) դիմաց վճարված եկամուտների հարկային գործակալները եկամտի վճարման աղբյուրի մոտ շահութահարկի պահում (գանձում) իրականացնում են 10% դրույքաչափով՝ վճարվող եկամտի ընդհանուր գումարից:

<<Եկամտահարկի մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 20-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ հոդվածի 1-ին մասի և 22-րդ հոդվածի համաձայն ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտահարկը պահում (գանձում) է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ: Բացառությամբ ուղալթիների, վարձավճարների, տոկոսների և գույքի ձեռքբերման դիմաց վճարված եկամուտների հարկային գործակալները եկամտի վճարման աղբյուրի մոտ ՀՀ քաղաքացիներից եկամտահարկի պահում (գանձում) իրականացնում են 10%/20% դրույքաչափերով՝ վճարվող եկամտի ընդհանուր գումարից: Բացառությամբ ապահովագրությունից ստացված ապահովագրական հատուցումների և փոխադրման (ֆրախտի) դիմաց վճարված եկամուտների, աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների հարկային գործակալները եկամտի վճարման աղբյուրի մոտ օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից (այսուհետ՝ օտարերկրացի) եկամտահարկի պահում (գանձում) իրականացնում են 10% դրույքաչափով՝ վճարվող եկամտի ընդհանուր գումարից (իրականացնելով միայն օրենքի 9-րդ հոդվածի <<բ>> և <<ժգ>> ենթակետերով սահմանված նվազեցումները):

Այն դեպքերում, երբ հարկային գործակալը փոխշահավետ համագործակցություն հաստատելու նպատակով Հայաստան է հրավիրում առանձին մասնագետներ (որպես ֆիզիկական անձ) և ոչ ռեզիդենտ կազմակերպությունների (կամ օտարերկրյա անհատ ձեռնարկատերերի) տարբեր մասնագետներ (որպես ֆիզիկական անձ), ինչպես նաև հարկային գործակալի խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի անդամներ և այլ մասնակիցներ (նիստերին մասնակցելու համար)՝ կատարելով այդ ֆիզիկական

անձանց գիշերավարձի ծախսերը (սովորաբար ձևակերպելով որպես ներկայացուցչական ծախսեր), ոչ ռեզիդենտի շահութահարկի կամ ֆիզիկական անձանց եկամտահարկի պարտավորությունները ճիշտ հաշվարկելու նպատակով և ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, **պաշտոնապես պարզաբանում են.**

1. Այն դեպքերում, երբ հրավիրվում են ոչ ռեզիդենտ կազմակերպությունների մասնագետները (ներկայացուցիչները), ապա հյուրանոցների կողմից հարկային գործակալի անունով դուրս գրված սկզբնական (հաշվառման) փաստաթղթերում նշված գիշերավարձի և հյուրանոցային սպասարկման այլ գումարները հարկային գործակալի կողմից ենթակա են հարկման ոչ ռեզիդենտի շահութահարկով (<<Շահութահարկի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ 10% դրույքաչափով)՝ հարկային գործակալի կողմից հյուրանոցին վճարումներ կատարելու դեպքում:

Այն դեպքերում, երբ հրավիրվում են օտարերկրյա անհատ ձեռնարկատերերի մասնագետները (ներկայացուցիչները), ապա հյուրանոցների կողմից հարկային գործակալի անունով դուրս գրված սկզբնական (հաշվառման) փաստաթղթերում նշված գիշերավարձի և հյուրանոցային սպասարկման այլ գումարները հարկային գործակալի կողմից ենթակա են հարկման եկամտահարկով (օտարերկրացիների համար <<Եկամտահարկի մասին>> օրենքով սահմանված կարգով՝ 10% դրույքաչափով)՝ հարկային գործակալի կողմից հյուրանոցներին վճարումներ կատարելու դեպքում:

Այդ ծախսերը հարկային գործակալի համախառն եկամտից նվազեցվում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով, իսկ դրանց նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ չեն հաշվարկվում:

2. Այն դեպքերում, երբ հրավիրվում են առանձին մասնագետներ (որպես ֆիզիկական անձ), ապա հյուրանոցների կողմից հարկային գործակալի անունով դուրս գրված սկզբնական (հաշվառման) փաստաթղթերում նշված գիշերավարձի և հյուրանոցային սպասարկման այլ գումարները հարկային գործակալի կողմից ենթակա են հարկման եկամտահարկով (<< քաղաքացիների կամ օտարերկրացիների համար <<Եկամտահարկի մասին>> օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերով)՝ հարկային գործակալի կողմից հյուրանոցներին վճարումներ կատարելու դեպքում:

Այդ ծախսերը հարկային գործակալի համախառն եկամտից նվազեցվում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով, իսկ դրանց նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ չեն հաշվարկվում:

3. Սույն պաշտոնական պարզաբանման 1-ին և 2-րդ կետերում նշված դեպքերում ոչ ռեզիդենտի շահութահարկի կամ ֆիզիկական անձանց եկամտահարկի պահումը (գանձումը) կապված չէ հարկային գործակալի կողմից կատարված ծախսերը որպես ներկայացուցչական կամ այլ տեսակի ծախսերին դասելու և գիշերավարձի կամ նորմավորվող այլ ծախսերի համար ՀՀ կառավարության սահմանած չափը գերազանցելու (կամ չգերազանցելու) հետ:

4. Այն դեպքերում, երբ հրավիրվում են հարկային գործակալ հանդիսացող առևտրային կազմակերպության խորհրդի կամ վերստուգիչ հանձնաժողովի անդամներ (որոնք չեն համարվում հարկային գործակալի վարձու աշխատողներ)՝ նիստերին մասնակցելու համար և խորհրդի նիստերի կազմակերպման ծախսերը կատարվում են

հարկային գործակալի չբաշխված շահույթի հաշվին, ապա հյուրանոցների կողմից հարկային գործակալի անունով դուրս գրված սկզբնական (հաշվառման) փաստաթղթերում նշված գիշերավարձի և հյուրանոցային սպասարկման այլ գումարները հարկային գործակալի կողմից ենթակա են հարկման եկամտահարկով (<< քաղաքացիների կամ օտարերկրացիների համար <<եկամտահարկի մասին>> օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերով)՝ հարկային գործակալի կողմից հյուրանոցներին վճարումներ կատարելու դեպքում:

Այդ ծախսերը հարկային գործակալի համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն, իսկ դրանց նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ չեն հաշվարկվում:

